

«Մանուկյան Սիմոն հետազոտական հիմնադրամը» (ՄՍՀՀ) սկսել է դրամաշնորհ ստանալ ու դիմումներ ընդունել՝ ՀՀ կառավարության համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ հետազոտություններ իրականացնելու նպատակով: Հայտեր կարող են ներկայացնել ինչպես փորձառու հետազոտողները, այնպես էլ համալսարանների ու սանողները:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը ս.թ. ապրիլի 7-ն է:

✓Պահանջները հետազոտողների համար.

- Կարող են դիմել ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային հետազոտողները,
- Հետազոտողները կարող են դիմել ինչպես անհատապես, այնպես էլ խմբով: Հետազոտական խմբի ղեկավարը պետք է ամբողջական դրույքով աշխատի հայաստանյան որևէ բուհում:
- Նախապատվությունը տրվելու է հիմնականում համալսարանի աշխատակիցներից կազմված խմբերին,
- Նախապատվությունը տրվելու է այն խմբերին, որոնք հետազոտության իրականացման գործընթացում կներգրավեն ուսանողի,
- Հետազոտության իրականացման ակնկալվող ժամկետը մեկ տարի է: Հետազոտությունը մեկ տարուց ավել կամ պակաս ժամանակահատվածում իրականացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորում:

✓Պահանջներն ուսանողների համար

- Դիմորդը պետք է լինի հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատության բակալավրիատի, մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի ուսանող,
- Կարող են դիմել ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային ուսանողները,
- Դիմողը պետք է ներկայացնի երաշխավորագիր ուսումնական հաստատությունից,
- Հետազոտության իրականացման ակնկալվող ժամկետը վեց ամիս է: Հետազոտությունը վեց ամսից ավել կամ պակաս ժամանակահատվածում իրականացնելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորում:

✓Դիմումները ներկայացվում են գործընթացը

- Կայքի ցբեռնեք դիմումի ձևը,
- Լրացրեք այն հայերենով կամ անգլերենով,
- Լրացված դիմումը ուղարկեք հետևյալ էլ. փոստի հասցեով՝ MSRFpanel@aua.am,
- Յուրաքանչյուր դիմորդ (խմբի ղեկավար) տվյալ հետազոտության թեմայի համար կարող է ներկայացնել միայն մեկ հայտ:

✓Մրցույթի արդյունքների ամփոփումը

Մրցույթի հաղթողն ընտրվում է մրցակցային գործընթացի միջոցով, որի ժամանակ դիմորդները գնահատվում են ըստ իրենց ներկայացրած հայտի մեթոդաբանության, հետազոտության համար պահանջվող գումարի, համապատասխան մասնագիտական փորձառության:

- ՄՄՀՀ-ի աշխատանքները համակարգվում են Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ:
- Որոշ դեպքերում կարող է կոնկրետ նախագծի համար սահմանվել ֆինանսավորման առավելագույն չափ:

✓Դիմումի ձևը ներբեռնելու և հետազոտությունների թեմաներին ծանոթնալու համար անցեք հետևյալ հղումով՝ www.msrf.aua.am